

**Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի միջոցաւ՝ Մայրագոյն
Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Ս. Օծութիւն Տ. Տ.
Վազգէն Առաջին Իր հայրապետական օրհնութիւնները,
շնորհաւորութիւնն ու բարեմաղթութիւնները կը փոխանցէ Գլիվլընտ
Օհայոյի Ս. Գրիգոր Նարեկացի Եկեղեցւոյ Մխական Խորհուրդին եւ
բոլոր անդամներուն՝ Եկեղեցւոյ օժման 25-ամեակին առթիւ:**

ՄՏԱԾՈՒՄՆԵՐ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՄՐԲԱՉՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

«Զի Աստուած ընդ մեզ է»: Ահա՛, այս հաւատքով ապրեցան մեր
լուսաբնակ նախնիք դարեր շարունակ: Ահա՛, այս հաւատքով կ'ապրին այսօր ու
պիտի ապրին միշտ մեր Եկեղեցին եւ մեր ազգը համայն:

...Մենք չենք կարող պատկերացնել մեր Եկեղեցին առանց Հայ ազգի եւ
առանց Հայ Հայրենիքի:

...Հայատանեայց Եկեղեցին Հայ ժողովուրդի Եկեղեցին է, անոր մայրն ու
դաստիարակը եւ պահապան հրեշտակը բոլոր ժամանակներուն մէջ: Մեր
Եկեղեցին ազգային Եկեղեցի է: Մեր Եկեղեցիին ճակատագիրը միշտ անբաժան
եղած է մեր ազգի ճակատագիրէն:

...Եկեղեցին չի կրնար հատուածական ըլլալ իր կոչումով ու իր սահմանումով
իսկ, չի կրնար յարափոփոխ ըլլալ, չի կրնար ժամանակաւոր ըլլալ:

...Իսկ Ս. Էջմիածինը լոկ անուն մը չէ մեզի համար: Ան նոյնիսկ լոկ
գաղափար մը չէ, ո՞չ ալ սովորական սրբավայր մը: Մենք սրբավայրեր շատ
ունինք, բոլորն ալ պաշտելի բոլորին համար հաւասարապէս: Ս. Էջմիածինը մեր
Մայր Սրբավայրն է, լոյսի եւ կեանքի աղբիւր, փրկութեան լաստ մեր տխուր
պատմութեան մէջ յաճախ ու միշտ յաղթական:

Վ Ա Զ Գ Է Ն Ա.

Մայրագոյն Պատրիարք

Եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց